# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*ՀՀ, Շիրակի մարզ, ք. Արթիկ* *04.05.2022թ.*

Սույն թվականի մայիսի 4-ին ժամը 12:00 ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Սանն Մետ» ՓԲԸ կողմից Արթիկ քաղաքի Գործարանային փողոց 2 հասցեում ձեռնարկվող սև մետաղների թափոնների վերամշակման/ձուլման գործարանի վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների (առաջին հանրային քննարկում) նիստը:

Ներկա էին Արթիկ համայնքի տեղակալը, ինչպես նաև ձեռնարկողի («Սանն Մետ» ՓԲԸ), «Քոնսեկոարդ» ՍՊ ընկերության և համայնքի ներկայացուցիչները ու բնակիչները (մասնակիցների ցանկը ստորագրություններով և տեսաձայնագրությունը կցվում են արձանագրությանը):

Բացման խոսքն ասաց Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Մակեյանը: Վ. Մակեյանը, ողջունելով ներկաներին և շնորհակալություն հայտնելով բոլորին ներկա գտնվելու համար, ներկայացրեց, որ «Սանն Մետ» ՓԲ ընկերությունը Արթիկ քաղաքի Գործարանային փողոց 2 հասցեում նախատեսում է իրականացնել սև մետաղների թափոնների վերամշակման/ձուլման գործարանի վերազինում, որը ՀՀ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության և գնահատման և փորձաքննության մասին» օրենքի, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Նա նշեց, որ այստեղ կազմակերպվում է առաջին հանրային քննարկումը, և խոսքը փոխանցեց «Քոնսեկոարդ» ՍՊԸ տնօրեն և գլխավոր մասնագետ՝ Վռամ Թևոսյանին:

Վ.Թևոսյանը ներկայացավ, նշեց, որ ըստ ՀՀ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի տվյալ գործունեությունը դասվում է «Ա» կատեգորիայի շարքին, որը համարվում է խորը ուսումնասիրվող գործունեություն և բաղկացած է 2 փուլից:

Նա նշեց, որ առաջին հանրային քննարկման հիմնական նպատակն է անդրադառնալ գործունեության բնույթին, հիմնական բնապահպանական ռիսկերին և դրանց նվազեցմանն ուղղված միջոցառումներին: Վ. Թևոսյանը նշեց, որ տվյալ գործունեությունը ներառում է սև մետաղների թափոնների հավաքում/գնում և դրանց վերամշակում ձուլման եղանակով: Նշեց, որ գործունեությունը նախատեսվում է սկսել երկու էլեկտրական վառարանով, և համեմատական անցկացնելով սև և գունավոր մետաղների ձուլման գործընթացների ազդեցությունների միջև, նշեց, որ սև մետաղների ձուլման վտանգն ավելի փոքր է: Եվ այն, որ հիմնական բնապահպանական խնդիրը կապված է ձուլման ընթացքում առաջացած արտանետումների հետ, մասնավորապես՝ ազոտի օքսիդներ, ածխախնի մոնոքսիդ և պինդ մասնիկներ: Նաև քննարկվեցին ջրօգտագործման և թափոնների հետ կապված ռիսկերը:

Բնապահպանական խնդիրների նկարագրությունից հետո Վ. Թևոսյանը անդրադարձավ բնապահպանական միջոցառումներին, նշելով, որ նախատեսվում է տեղադրել գազամաքրման համակարգ, արտադրական ինչպես նաև իրականացվելու են աշխատանքի պաշտպանության հետ կապված միջոցառումներ:

Բնակիչ Դ. Չուխիկյանը նշեց, որ աշխատանքների ժամանակ անհրաժեշտ կլինի օգտագործել էլեկտրաէներգիա, իսկ համայնքում առկա են էլեկտրաէներգիայի հետ կապված խնդիրներ և, ապա հարցրեց, թե ի՞նչ հզորությամբ էլեկտրաէներգիա է օգտագործվելու:

Ձեռնարկողի ներկայացուցիչ Նարեկ Մարտիրոսյանը պատասխանեց, որ իրենց կազմակերպությունը իրականացրել է ուսումնասիրություն և տեղյակ են առկա խնդրի մասին, հետևաբար նախատեսվում է ունենալ առանձին ենթակայան և սնուցման գիծ:

Համայնքի առաջատար մասնագետ Տաթևիկ Չարչյանը, հետաքրքրվեց ձուլման արդյունքում առաջացած թափոնների (խարամի) ծավալներով: Վ. Թևոսյանը նշեց, որ դա առավել անվտանգ է այդ խարամը կարելի է տեղափոխել համայնքային աղբավայր, բացի այդ այն լայնորեն օգտագործվում է ցեմենտի արտադրությունում:

Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Մակեյանը դիմեց նախաձեռնող Ն. Մարտիրոսյանին, հարցնելով գործարանի ներկա վիճակի, ինչպես նաև նախատեսվող աշխատանքների սկսման ժամկետների մասին: Ն. Մարտիրոսյանը պատասխանեց, որ գործարանը գտնվում է նորմալ վիճակում, սակայն անհրաժեշտ է իրականացնել ներդրումներ և կատարել վերազինման աշխատանքներ:

Համայնքի բնակիչ Դ. Չուխիկյանը հարցրեց աշխատանքի վտանգավոր և վնասակար պայմանների մասին, և հետաքրքրվեց թե կան արդյո՞ք լրացուցիչ արտոնություններ:

Վ. Թևոսյանը նշեց, որ մանրամասն միջոցառումներ, կապված սանիտարական միջոցառումների հետ կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվության մեջ:

Քանի որ այլ հարցեր չհնչեցին, Վ. Մակեյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց նիստը:

Հանրային քննարկումների պատասխանատու
Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Վ. Մակեյան

Ձեռնարկող՝ «Սանն Մետ» ՓԲԸ տնօրեն Ն. Մարտիրոսյան

Քննարկումները արձանագրեց՝ Տ. Չարչյան